

*Խ.Աթուրյանի անվան հայկական պեդագոգական մասնագիտական համալսարանի հասարակ կրթության ֆակուլտետի դեկան, մասնագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**PECS-Ը ՈՐՊԵՍ ԱՌԻՏԻԶՄՈՎ ԵՐԵԽԱՅԻՆ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍԵԼՈՒ ՄԻՋՈՑ**

Նկարների փոխանակմամբ հաղորդակցման համակարգը (PECS) հանդիսանում է այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցման տարատեսակներից մեկը:

PECS-ի հիմնական նպատակը աուտիզմ ունեցող երեխաների ֆունկցիոնալ հաղորդակցման զարգացումն է: Այն երեխաներին ընձեռում է հաղորդակցվելու հնարավորություն ինչպես սովորական, կենցաղային, այնպես էլ արտասովոր, ոչ ստանդարտ, սթրեսային իրավիճակներում: Դա դրականորեն է ազդում աուտիզմ ունեցող երեխաների վարքագծի և հուզականային ոլորտի վրա:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ այլընտրանքային հաղորդակցում, հաղորդակցման գիրք, էլիտալիա, լոգոպեդական թերապիա, ֆունկցիոնալ հաղորդակցում, «խոսող» սարքեր, I-Pod/I-Pad սարքերում ներբեռնվող համակարգչային ծրագրեր :

Վերջին տարիներին նկատվում է սոցիալիզացիայի, հարմարվողական վարքի, խոսքի և հաղորդակցման զարգացման խանգարումներ ունեցող երեխաների թվի աճ: Հայտնի է, որ հաղորդակցման դժվարությունների դեպքում երեխան ունենում է հոգեբանական խնդիրներ, հուզական ու անձնային ոլորտի, վարքի խանգարումներ:

Հաղորդակցման դժվարություններն առավել բնորոշ են վաղ մանկական աուտիզմով երեխաներին: Երբեմն նրանց մոտ հանդիպում է խոսքային ակտիվու-

թյուն, որը դրսևորվում է բառերի, արտահայտությունների կրկնություններով, մուլտֆիլմերից ու համակարգչային խաղերից ամբողջական նախադասությունների մեջբերումներով, ինչը բառերի մեխանիկական կրկնություն է (էլիտալիա) և չի ծառայում հաղորդակցմանը [1]:

Աուտիզմով անձանց խոսքի և հաղորդակցման դժվարությունների հաղթահարումը միշտ եղել է մասնագետների ուշադրության կենտրոնում. մշակվել են տարբեր մեթոդիկաներ: Վերջին տարիներին դրանց թվում գերիշխում են այլընտրանքային, ոչ խոսքային միջոցների ժեստերի, նկարների, սիմվոլների, տեխնիկական միջոցների, «խոսող» սարքերի, I-Pod, I-Pad սարքերում ներբեռնվող համակարգչային ծրագրերի կիրառմամբ մեթոդիկաները: Հաղորդակցման այլընտրանքային ձևերը կարող են հանդես գալ որպես.

1. հաղորդակցմանը օգնող, լրացուցիչ միջոց, երբ երեխայի բառապաշարն աղքատ է և խոսքում առկա են քերականական սխալներ:
2. հաղորդակցման ժամանակավոր միջոց, քանի դեռ չի ձևավորվել բանավոր խոսքը,
3. հաղորդակցման միակ հնարավոր եղանակ, որը մարդուն ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում [2]:

Հաղորդակցման այլընտրանքային տարատեսակներից է նկարների փոխանակմամբ հաղորդակցման համակարգը՝

PECS–ը (Picture Exchange Communication System): PECS–ի հիմնական նպատակն է՝ երեխային դրդել ինքնուրույնության ու նախաձեռնության, նրա մոտ ձևավորել ֆունկցիոնալ հաղորդակցման հնարություններ [3]: Ֆունկցիոնալ է համարվում այն հաղորդակցումը, որը դրսևորվում է առօրյայում, առանց մեծահասակի ցուցումների, ինքնաբերալ ձևով: Այն ոչ թե բառերի մեխանիկական կրկնություն է, այլ նկարների, խոսքի նպատակաուղղված կիրառում՝ միտված ցանկություններ արտահայտելուն, մտքեր փոխանակելուն, հարցեր տալուն և այլն:

Բնականոն զարգացման դեպքում կարիք չի լինում երեխային սովորեցնել խոսել այս կամ այն իրավիճակում: Աուտիզմով երեխաների հետ աշխատելիս, հաղորդակցման հնարություններ ձևավորելուց բացի, լոգոպեդի խնդիրն է դրանք տարբեր իրավիճակներ «ներմուծելը», այլապես երեխան կարող է կիրառել խոսքը/հաղորդակցումը միայն որոշակի անձի հետ շփվելիս, որոշակի վայրում ու իրավիճակում:

PECS– ով հաղորդակցվող երեխան ունենում է անհատական հաղորդակցման գիրք, որի էջերին փակցված են գործողություններ ու հույզեր արտահայտող, ուտելիքի, խաղալիքների, կենցաղային իրերի և այլ պատկերներ: PECS–ի միջոցով հաղորդակցվելու սկզբնական փուլերում լոգոպեդի նպատակն է երեխային սովորեցնել արտահայտել իր ցանկությունները և ապահովել երեխայի հաղորդակցումն իր համար սովորական, կենցաղային իրավիճակներում, ծանոթների հետ: Օրինակ՝ խոհանոցում մայրիկից ինչ–որ բան խնդրել: Աստիճանաբար սոցիալական փոխազդեցության ունակությունները երեխան սկսում է օգտագործել ցանկացած իրավիճակում: Ցանկություններն արտահայտելուց բա-

ցի, երեխան սովորում է մեկնաբանել տարբեր իրավիճակներ՝ պատասխանելով «Ի՞նչ էս տեսնում», «Ի՞նչ էս լսում», «Ի՞նչ է սա» և այլ բազմազան հարցերի: Վերոհիշյալ փուլերի ընթացքում երեխան նաև սովորում է ենթարկվել «Մպապիր» հրահանգին, ընկալել «այո» և «ոչ», «չկա» բառերի իմաստը, արտահայտել սեփական հույզերը և ամենուր դրսևորել իրավիճակին համապատասխան վարքագիծ [3]:

Չափազանց կարևոր է նկարների փոխանակմամբ հաղորդակցվող երեխային նախապատրաստել փոփոխվող իրավիճակներին, քանի որ աուտիզմով երեխայի համար արտակարգ իրավիճակին, աղետին համարժեք կարող է լինել գործողությունների սովորական ընթացքի փոփոխությունը, անծանոթի հետ հաղորդակցվելու, ինչ–որ տեղ գնալու անհրաժեշտությունը (խանութ, սրճարան, դպրոց, լողավազանի կամ մարդաշատ վայրեր գնալը, բժշկի այցելելը): Անծանոթ, արտասովոր իրավիճակներին նախապատրաստումը իրականացվում է նկարների միջոցով՝ հնարավոր բոլոր իրադարձությունները, հանդիպումները, գործողությունները քայլ առ քայլ ցուցադրելով և մեկնաբանելով: Նկարների օգտագործմամբ հույզերի, գործողությունների ցուցադրումը, երեխայի կողմից առավել լիարժեք է ընկալվում [4]:

Երեխային սովորեցնում ենք ընկալել և արձագանքել այս կամ այն իրավիճակին բնորոշ ձայներին, պատկերներին, նույնիսկ հոտերին: Հնարավոր գործողությունները ամենայն մանրամասնությամբ ցուցադրվում են: Օրինակ՝ մոտենալ հիվանդանոցին, մտնել ընդունարան, գրանցվել, խոսել բուժքրոջ հետ, մտնել բժշկի սենյակ, բացել բերանը և այլն: Երեխային սովորեցնում ենք ընկալել և արձագանքել գործողության հետ

կապված ճայներին, տեսարաններին, նույնիսկ հնարավոր հոտերին: Կարևոր է երեխային սովորեցնել նկարների միջոցով արտահայտել հույզերը («Ես տխրում եմ», «Ես վախենում եմ», «Ես հուզվում եմ», ինչին հետևում է երեխայի կողքին գտնվող մեծահասակի մեկնաբանությունը, աջակցությունը, քաջալերանքը:

Նախապատրաստական աշխատանք տանելու դեպքում, ինչպես փաստում են աուտիզմով երեխաների ծնողները, նկատվում է երեխաների վարքի, հուզական ոլորտի դրական փոփոխություն: Հակառակ դեպքում, անսովոր իրավիճակներում, չկարողանալ արտահայտել հույզերը, երեխան դրսևորում է ոչ սոցիալական վարք, ագրեսիա, ինքնաագրեսիա կամ ցուցաբերում է անտարբերություն:

Հաշվի առնելով այն փաստը, որ աուտիզմով երեխաները ընդգրկվում են

ներառական կրթության համակարգ, կարևոր է նաև մյուս երեխաների նախապատրաստումը այս երեխաների հետ հաղորդակցվելուն: Ուսուցիչը, լուգուպեդը, ծնողը երեխայի դասընկերներին ներկայացնում են նրա հաղորդակցման գիրքը, ցուցադրում են նկարները, բացատրում են դրանց նշանակությունը, առաջարկում են փորձել մտքերն արտահայտել այդ նկարների միջոցով, խրախուսում են դասընկերների կողմից երեխայի հետ հաղորդակցվելու փորձերը:

Այս աշխատանքի շնորհիվ երեխայի հասակակիցների կողմից հաղորդակցման այս ձևն ընդունվում և լիարժեք ընկալվում է: Երեխան բավարարում է հաղորդակցվելու ցանկությունը, զգալիորեն նվազում են իրավիճակին ոչ համապատասխան վարքագծի դրսևորումները:

*Հոդվածի ներկայացման ցուցանիշները՝ 08.01.14 թ.*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Avagyan A. Communication of Children with Autism. Abstract book of Regional Meeting of The World Psychiatric Association, Yerevan, 2011, S 23
2. Avagyan A. New Method for Correction of communication for Children with Autism Abstract book of 3–rd international medical congress of Armenia. Yerevan, 2011, p.323
3. Bondy A. & Frost L. A Picture’s Worth: PECS and Other Visual Communication Strategies in Autism, 2011, p.143
4. Susan Vander Wyk, Liz Steinberger&Kim Even Where are we go?...To the doctor!, 2008., p. 18.

### PECS КАК СРЕДСТВО ПОДГОТОВКИ ДЕТЕЙ С АУТИЗМОМ К НЕСТАНДАРТНЫМ СИТУАЦИЯМ

#### АРМЕНИИ АВАГЯН

*Декан факультета специального образования Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна, кандидат педагогических наук, доцент*

Коммуникационная система с обменом картинок (PECS) является одной из методик альтернативной дополнительной коммуникации. Основная цель системы PECS – развитие навыков функциональной коммуникации у детей с аутизмом. PECS дает детям возможность общения не только в привычных, но и непривычных,

нестандартных ситуациях. Это способствует положительным изменениям в поведении и в эмоционально–волевой сфере детей.

В работе с детьми с ранним детским аутизмом обучению поведению в нестандартных, стрессовых ситуациях необходимо уделять специальное внимание.

*Дата представления статьи: 08.01.14 г.*

## PECS AS A MEANS OF PREPARING CHILDREN WITH AUTISM FOR UNUSUAL SITUATIONS

**ARMENUHI AVAGYAN**

*Dean of the Faculty of Special Education, ASPU, PhD in Pedagogy, Associate Professor*

Picture Exchange Communication System (PECS) is considered as one of the alternative methods of additional communication. The primary goal of PECS system is the development of functional communication skills of children with autism. PECS gives the children an opportunity to communicate, not only in usual, but also in unusual, stressful situations.

It promotes positive changes in behavior and emotional sphere of children. The experience has shown, that the children, who use PECS, are understood with ease by their surrounding people, as well as by their fellows, and the implication of pictures by parents in the process of information exchange improves its understanding.

*Article submission date 08.01.14*